

Վ. Պարոտմյան

ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻ ՇԵՐՈՍ ԴԵՆԻՍ ԴԱՎԻԴՈՎԸ 1812 Ք.  
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Ռազմական փառահեղ անցյալ ունի ոռու մեծ ժողովուրդը: Իր հայրենիքի, իր ազատության և ինքնուրույնության համար ոռու ժողովուրդը դարերի ընթացքում մեծ կռիվներ է մղել իր վրա արշաված օտար հափըշտակիչ ուժերի՝ մոնղոլ-թաթարական հորդաների, գերմանական «շուն ասպետների» (Մարքս), շվեդների և շատ ուրիշների դեմ: Դարեր շարունակ ոռու ժողովուրդը ոչ միայն պահել, պահպանել է իր ազգային ինքնուրույնությունը, իր հայրենիքը, այլև ավելի ու ավելի ամրացրել է, դարձնելով այն հզոր ու անպարտելի:

Ռուս ժողովրդի ռազմական հզորությունն ավելի է մեծանում ոռուաց պատմության նոր շրջանում՝ ոռուական հողի համախմբումից և ոռուական ազգային պետության կազմվելուց հետո: Իսկ 18-րդ դարում Ռուսաստանի մղած հաղթական մեծ պատերազմները (25 տարի Շվեդիայի դեմ, 15 տարի թյուրքիայի և այլն) ոռուական դիմաքի հմայքը տարածում են ամրոզ աշխարհում:

Էնդելսը, որ ռազմական գործի լավագույն մասնագետ էր, խոսելով Եվրոպայում անուն հանած շվեդական թագավոր Կարլոս XII-ի բանակի դեմ Պյոտր I-ի բանակի տարած հաղթանակի մասին, ասում է, որ դրանով իսկ ոռուական բանակը ցույց տվեց իր մարտունակությունը և Ռուսաստանի անխոցելիությունը:

Պյոտր I-ի մղած պատերազմները մեծ դեր են կատարում Ռուսաստանի ինքնուրույնության և ոռու ժողովրդի հայրենասիրության զարգացման գործում: Ինքը՝ Պյոտր I-ը տոգորված էր հայրենասիրական վեհ զաղափարներով: Իր ժամանակին ոռու մեծ ռեյտինգի տն-դեմոկրատ Չերնիշևսկին նրան համարում էր առողջ միտք և կենդանի սիրտ ունեցող յուրաքանչյուր ոռու մարդու համար պատրիոտի իդեալ<sup>1</sup>:

Ռուս ժողովրդի ռազմական ունակությունները և հայրենասիրական ոգին նոր թափ ու ավելի լայն ծավալ են ստանում նապոլեոնական արշավանքի շրջանում:

Եվրոպայի մի շարք երկրներ նվաճելուց հետո, ինչպես հայտնի է,

<sup>1</sup> Чернышевский, Избр. соч., 1934 г., стр. 333.

Նապոլեոնը ձգտում էր նվաճելու Ռուսաստանը, Միջին Ասիան ու Կովկասը, իսկ այնուհետև՝ Մերձավոր Արևելքն ու Հնդկաստանը։ Նա երազում էր ստեղծել իր համաշխարհային տիրապետությունը։

1812 թվականի հունիսի 23-ին Նապոլեոնը մեծ բանակով արշավում է Ռուսաստանի վրա։ Հայրենիքին սպառնացող ահեղի վտանգը միանգամից ոտքի է հանում ողւս ժողովրդին։ Սկսվում է ողւս ժողովրդի հայրենական մեծ պատերազմը Նապոլեոնյան բանակի դեմ։

Հայրենական պատերազմի հենց սկզբից ողւսական ռեզոլյար բանակի հետ թշնամու դեմ են նետվում ողւս գյուղացիների պարտիզանական խմբերը։ Նապոլեոնի դորքերի հետագա առաջխաղացման հետ թշնամու ձևըն անցած տերիտորիայում պարտիզանների գործողությունները գնալով ավելի ու ավելի են ձավալվում։ Սկիդք է սունում պարտիզանական ծավալուն մի շարժում, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ողւս ժողովրդի հայրենասիրական զգացմունքների և ազատասիրական ոգու տարերային մի պոթկում, հայրենական պատերազմի ձևերից մեկը։ Պատմական բազմաթիվ փաստերով ապացուցված է, որ պարտիզանական շարժման նախաձեռնողները եղել են ողւս հայրենասեր գյուղացիները։ Դեներալ Երմոլովը պատմում է, որ Սմոլենսկի նահանգում գյուղացիներն իրենք էին առաջարկում օժանդակել մեր դորքերին, չխնայելով ոչ իրենց գույքը և ոչ էլ կյանքը<sup>1</sup>։

Գյուղացիության մեջ տարերայնորեն ծայր առած պարտիզանական շարժումը շուտով զրավում է ողւսական բանակի հրամանատարությունն ուղադրությունը։ Առաջին մարդը, որ նկատում և ըմբռնում է պարտիզանական շարժման օգտակարությունը, Դենիս Դավիդովն էր, Իելինսկու զնահատությունը՝ ժամանակակից «ամենանշանավոր մարդկանցից» մեկը։ «Պատերազմ և խաղաղություն» իր հայտնի աշխատության մեջ Լև Տոլստոյը խոսելով 1812 թվականի հայրենական պատերազմի ժամանակ եղած պարտիզանական կռիվների մասին, ասում է, որ Դենիս Դավիդովը «իր ողւսական հոտառությամբ առաջինն ըմբռնեց այդ ահավոր գարծիքի նշանակությունը»։

Դենիս Դավիդովը սովորության դպրոցի աչքի ընկնող գորավարների՝ Կոլտուզովի, Բագրատիոնի, Ռայսկու, Երմոլովի և Կուլնեի համակիրներից էր։ Որպես ռազմիկ նա իր մկրտությունն ստացել էր Բագրատիոնի և Կուլնեի մոտ, ողւսական բանակի մղած հերոսական մարտերում։ Դենիս Դավիդովը ռազմական մեծ փորձի տեր մարդ էր։ Նա մասնակցել էր 1806—1807 թ. թ. պատերազմներին Պրուսիայում, 1808 թ. Ֆինլանդիայում, 1809—1810 թ. թ. Թյուրքիայում։ Այս բոլոր պատերազմներում Դենիս Դավիդովը եղել էր առաջին շարքերում և նրա անունը, ինչպես ինքն է ասում, «ցցվել էր որպես կողակի նիզակ»։

Քաջ ռազմիկ լինելուց զատ՝ Դենիս Դավիդովը միաժամանակ տաղանդավոր ռազմական պատմագիր էր և բանաստեղծ։ Իսկ այս բոլորի հետ և ամենից առաջ նա բոցաշունչ հայրենասեր էր։ Իր մի բանաստեղծության մեջ նա հետևյալ կերպ է արտահայտում հայրենիքի հանդեպ ունեցած իր սերն ու նվիրվածությունը։

<sup>1</sup> Записки А. П. Ермолова, ч. I, стр. 58, 1863 г.

За тебя на чорта рад,  
Наша матушка Россия!

Դենիս Դավիդովի ռազմական հարուստ փորձը, նրա արիությանը, հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն էլ հենց պայմանավորում են սխրագործությունների այն ամբողջ շարանը, որ նա ցույց է տալիս 1812 թվականի հայրենական պատերազմում, որպես բանակային պարտիզանական խմբերի հիմնադիր, որպես հերոս պարտիզան: Դենիս Դավիդովը իրեն անվանում է «միմիայն օրհասական 1812 թվականի համար ծնված մարդ»: Եվ հատկանշական է, երբ Նապոլեոնի զորքերը թափանցելով Ռուսաստանի խորքերը, գրավում են Սմոլենսկը, երբ հայրենիքին սպառնացող վտանգը գնալով աճում է, նա առաջադրում է պարտիզանական կռիվներ մղելու իր հռչակավոր պլանը և խնդրում է հրամանատարություններից իրեն թույլ տալ անցնելու պարտիզանական գործողությունների՝ Թշնամու թիկունքում:

1812 թ. օգոստոսի 21-ին Դավիդովը ներկայանում է գեներալ Բագրատիոնին և նրան ծանոթացնում է պարտիզանական կռիվների իր պլանին: «Թշնամին դալիս է մի ճանապարհով, —ասում է նա,—որն իր երկարությունը չափ ու սահման չունի: Թշնամու կենսական և մարտական մթերքների տրանսպորտը ձգվում է Գժատից մինչև Սմոլենսկ և ավելի... Ի՞նչ են անում կողակային խմբերը ավանգարդում: Նրանցից բավարար քանակությամբ թողնելով ավանգարդային պոստերը պաշտպանելու համար, մնալով զանրերին անհրաժեշտ է բաժանել առանձին մասերի և նեռել Նապոլեոնին հետևող կարավանների մեջ... Նրանք կոչնչացնեն թշնամու բանակի ուժի և կյանքի աղբյուրը: Հարկավոր է քաջալերել պատերազմից ցրիվ եկած գյուղացիներին և զինվորական պատերազմը վերածել ժողովրդական պատերազմի: Ասում են՝ եթե Մոսկվան ընկնի և հաշտություն կնքվի, մենք հարկադրված կլինենք Հնդկաստանում շաբաւնակել կռիվները: Հնդկաստանում իմ հարյուր հազարավոր հայրենակիցների հետ ես կկորչեմ Ռուսաստանին խորթ շահի համար և առանց անվան, իսկ այստեղ ես կմեռնեմ անկախության դրոշի տակ, որի շուրջը համախառնված են թշնամու ճնշումից և անասավածությունից հեծող գյուղացիները»<sup>1</sup>:

Նապոլեոնի բանակի դեմ պարտիզանական կռիվներ մղելու իր պլանը մշակելիս՝ Դենիս Դավիդովը լայն չափով օգտագործում է ռուս ժողովրդի նախորդ ժամանակների պարտիզանական կռիվների փորձը, ինչպես և Նապոլեոնի դեմ 1809 թվականին իսպանական ժողովրդի մղած պարտիզանական կռիվների դասերը: «Իսկական պարտիզանական կռիվը, —ասում է Դավիդովը,—պետք է արտահայտվի ոչ շատ փոքր և ոչ էլ շատ մեծ ձևերով: Նա չի զբաղվում ոչ ուղեկալներ ստեղծելով, ոչ էլ Թշնամու գլխավոր ուժերին ուղղակի հարված հասցնելով: Նա պոկում է թշնամու գոյություն արմատը, զրկում է նրան աննդից ու լիցբից (зарядов) և դժվարացնում է նրա նահանջը»: «Պարտիզանը գործում է ավելի անտառայնաբ, քան ռուսով: Նրա հավատարիմ դաշնակիցը հանկարծակյանու-

<sup>1</sup> Д. Давыдов, Военные записки (дневник партизанских действий 1812 года).

Քյուլնե Կ: Պարտիզանի գլխավոր խնդիրն է՝ անընդհատ, բոլոր միջոցներով նեղել, անհանգստացնել և հոգնեցնել թշնամուն: Իր գործը տեսնելով՝ պարտիզանն անմիջապես պետք է թագնվի. «Ուփեցիր թե չէ, հեռացիր — ահա պարտիզանի տակտիկայի էությունը»:

Թեորետիկական և տակտիկական այսօրինակ հիմունքների վրա էլ Դենիս Դավիդովը կառուցում է իր պարտիզանական գործունեությունը 1812 թ. հայրենական պատերազմում:

Բագրատիոնի միջնորդությունը ֆելդմարշալ Կուտուզովից հիսուն հուսար և ութսուն կողակ զինվորներ ստանալով՝ Դենիս Դավիդովն անցնում է թշնամու թիկունքը և սկսում իր պարտիզանական կոիզները: Դավիդովի պարտիզանական ջոկատները սերտ կապ պահպանելով գյուղական պարտիզանական խմբերի հետ, ղիպուկ հարվածներ են հասցնում թշնամուն թիկունքից: Ամենուրեք նրանք հարձակվում են հակառակորդի կոմունիկացիաների, տրանսպորտի վրա, պայթեցնում են ռազմամթերքի պահեստները, հրկիզում են ֆուրաժը, խանգարում են զինվորներին հաց, ջուր, կերակուր մատակարարելու գործը, փախցնում են գերիներին և խտացրնում պարտիզանական ջոկատների շարքերը, հետապնդում, բռնում են փոստատարներին և խլում նրանցից կարևոր օպերատիվ փաստաթղթեր, ոչնչացնում են մարդկորներին և այլն և այլն: Այնքան էֆեկտիվ է լինում Դենիս Դավիդովի պարտիզանական ջոկատների գործունեությունը, որ շատ շուտով նրա համբավը տարածվում է ողջական բանակում և գյուղացիության մեջ: Դենիս Դավիդովի օրինակով մեկը մյուսի հետևից սունկի պես աճում են պարտիզանական ջոկատները: Շարքային զինվորներ Չետովերտակովը և Ստեպան Երեմենկոն, գյուղացի Գերասիմ Կուրինը, գեղջկուհի Վասիլիսան, Ֆիզները, Կուզաշևը, Սեսլավինը և շատ ուրիշ հայրենասերներ պարտիզանական խմբեր կազմակերպելով՝ գյուղերում, անտառներում, ճանապարհներին, կամուրջների վրա իրենց հանկարծակի հարձակումներով ահ ու սարսափ են տարածում Ռուսաստան ներխուժած նապոլեոնական զինվորների վրա: Հենց իրենց՝ Փրանսիացիների վկայությամբ, բացի Իսպանիայից, գյուղացիությունը ոչ մի տեղ այնպիսի համառ զիմազրություն չէր ցույց տվել իրենց, ինչպես Ռուսաստանում: «Մեր մոտեմալուց յուրափանջյուր գյուղ վեր եր ածվում կամ խարույկի, կամ ամբուքյան» — հետագայում դառնություն խոստովանում էին Փրանսիացիները: Դավիդովը ականատես է լինում, թե ինչպես կամավոր կերպով աշխարհագորի (ոպուչենիե) մեջ մտած գյուղացիները, մեծ ու փոքր, զինված եղաններով, կացիններով, ումանք էլ զենքերով՝ զիմազրում էին թշնամուն տներ, դարպասների հետևից:

Պարտիզանական շարժումների ծավալումից հետո նապոլեոնյան բանակը Ռուսաստանում երբեք ապահով թիկունք չի ունենում: Զվենիգորդսկի օկրուգում պարտիզանները ոչնչացնում և շարքից դուրս են դրում ավելի քան երկու հազար զինվոր և խլում են մի քանի թնդանոթ: Ռուզայում գյուղացի պարտիզաններն սպանում են մոտ հազար հոգու: Պարտիզանուհի Վասիլիսան և նրա հետ գործող համագյուղացի կին պարտիզանները եղաններով ու մահակներով հերոսաբար ոչնչացնում են բազմաթիվ

մարտի յորհները և այլասերված սպաների ու զինվորների: 1812 թ. սեպտեմբեր—հոկտեմբեր, ամիսներին միայն Դավիդովի պարտիզանական ջոկատը 3500 զինվոր և 43 սպա է գերում նապոլեոնյան բանակից: «Պարտիզաններին հանդիպելիս հակառակորդն անմիջապես ցած էր գցում իր զենքերը» ասում է Դավիդովը:

Դենիս Դավիդովի գլխավորած պարտիզանական ջոկատների հերոսական գործողութունները հարկագրում են ուսական բանակի հրամանատարութեանը՝ ավելի մեծ ուշադրութուն դարձնել պարտիզանական շարժման վրա և հրաժարվել սկզբնական շրջանի իրենց անվստահ վերաբերմունքից: Դավիդովի երկու ամսվա հերոսական կռիւների փորձից հետո, ֆելդմարշալ Կուտուզովը նրան շնորհակալութուն հայտնելով, ասում է. «Ձեր հաջող փորձերն ինձ ապացուցեցին պարտիզանական կռիւների օգտակարութունը, որոնք այնքան շատ ֆրանսիացիներին, հասցնում են և կհասցնեն թշնամուն»:

Հայտնի է, որ նապոլեոնյան բանակը Գախախելու իր ստրատեգիական պլանը մշակելիս՝ հուշակավոր գորավարը լայն աեղ էր տվել նաև պարտիզանների ու աշխարհագրի գործողութուններին: Կյանքն ամբողջութեամբ հաստատեց նրա պլանի ճշտութունը: Պարտիզանները և աշխարհագրականները հսկայական դեր կատարեցին հայրենական պատերազմը հաղթանակով պսակելու գործում: Նրանք առանձնապես ծանր կորուստներ պատճառեցին թշնամուն նրա նահանջի ժամանակ:

Այսպիսով, ուսական քաջարի բանակը, հայրենասեր ու անձնագոհ ուս ժողովրդի հետ ձեռք ձեռքի, մեջք մեջքի տված, իրենց հայրենի հողից դուրս վաղեցին Նապոլեոնի իմպերիալիստական բանակը: 1812 թվի պատերազմն ավարտվեց ուս մեծ ժողովրդի լիակատար հաղթանակով: 1812 թվականից, ինչպես Լենինն է ասում, սկսվեց Նապոլեոն Կ-ի ռազմական հզորութեան անկումը, որը և ընդհանուր ապստամբութունների ազդանշան հանդիսացավ նրա երոզական տիրապետութունների համար:

Հայրենական պատերազմը ուս ժողովրդի ընդերքից վեր բարձրացրեց բազմաթիվ հերոսներ, որոնց անունները մի անգամ ընդմիշտ մտան ուս ժողովրդի պատմութան մեջ: Ռուս հայրենասերների այդ փառապանծ պետադայի շարքում շողողաց նաև հերոս պարտիզան Դենիս Դավիդովի կերպարը: Նրա գովքը երգեցին Պուշկինը, Ժուկովսկին, Բարատինսկին: Ռուսական կյանքի մեծ հայելին՝ Լև Տոլստոյը, «Պատերազմ և խաղաղութուն» գրքում անմահացրեց նրա անունը Վասիլի Դենիսով անվան տակ: Եվրոպական թերթերը սկսեցին գրել Դավիդովի մասին: Անգլիացի նշանավոր գրող Վալտեր Սկոտը նրա նկարը կախեց իր առանձնասենյակում:

Մովետական ժողովուրդը միշտ էլ երախտագիտութեամբ է հիշել, իր հայրենիքի ազատութեան ու անկախութեան համար մարտնչած հերոսների անունները: Մովետական ժողովուրդը միշտ էլ օգտագործել է նրանց ուսանելի փորձը:

Այժմ էլ, երբ Հիտլերի ֆաշիստական բանդաներն ավազակային հարձակում են գործել մեր երկրի վրա և ձգտում են իրենց արյունոտ թաթը դնել մեր ազատ ու երջանիկ ժողովուրդների վրա, 1812 թ. հայրենական պա-

տերազմի փորձի, համաշխարհային պատմութեան մեջ իր նմանը չունեցող 1918—1920 թ. թ. քաղաքացիական կռիւներէ ժամանակաշրջանի պարտիզանական կռիւներէ փորձի օգտագործումով, սովետական ժողովուրդը, իր հերոսական Կարմիր Բանակի հետ, ջախջախիչ հարված կտա նենգ թշնամուն և, ինչպես միշտ, այս անգամ էլ բարձր կպահի մեր երկրի, մեր ժողովրդի փառքն ու պատիվը: